ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

10.08.2023
351-39

Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Ռուստամ Բաղասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բաղասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2022 և 2023 թվականների ընթացքում Հայաստանում գրանցված ո՞ր ընկերություններն են «HS 8528» դասակարգչին համապատասխանող ապրանքներ (մոնիտորներ և պրոյեկտորներ, իր մեջ ընդունիչ հեռուստատեսային ապարատուրա չընդգրկող, ընդունիչ ապարատուրա՝ հեռուստատեսային կապի համար, իր մեջ լայնահեռարձակման ռադիոընդունիչ կամ ձայնը կամ պատկերը գրառող կամ վերարտադրող ապարատուրա ընդգրկող կամ չընդգրկող) ներմուծել Հայաստան:

2. Նույն ժամանակահատվածում ո՞ր ընկերություններն են իրականացրել նույն դասակարգչին համապատասխանող ապրանքների արտահանում:

3. Նրանցից ո՞ր ընկերություններն են այդ դասակարգչին համապատասխանող ապրանքներ արտահանել Ռուսաստան և Բելառուս:

4. 2022 և 2023 թվականների ընթացքում Հայաստանում գրանցված ո՞ր ընկերություններն են «HS 852872» դասակարգչին համապատասխանող ապրանքներ ներմուծել Հայաստան:

5. Նույն ժամանակահատվածում ո՞ր ընկերություններն են իրականացրել նույն դասակարգչին համապատասխանող ապրանքների արտահանում:

6. Նրանցից ո՞ր ընկերություններն են այդ դասակարգչին համապատասխանող ապրանքներ արտահանել Ռուսաստան և Բելառուս:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան